https://doi.org/10.46991/S&L/2022.92.088

ՔՆՆԻՉԻՆ ՎԱՐՈՒՅԹԻՑ ՀԵՌԱՑՆԵԼՈՒ ՔՐԵԱԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ՝ ԸՍՏ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՂ ԵՎ ՆՈՐ ՕՐԵՆՍԳՐՔԵՐԻ

Արսեն Մարտիրոսյան
ՀՀ գլխավոր դատախազության ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում միջդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության պետ, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ

Քննիչին քրեական դատավարությանը մասնակցելուց[1] հեռացնելու՝ դատախազական ակտի իրավական բնույթի վերաբերյալ մասնագիտական գրականության մեջ միասնական մոտեցում չկա:

Այսպես՝ դատավարագետների մի մասը գտնում է, որ քննիչին վարույթից հեռացնելը դատախազի՝ հսկողական լիազորության իրականացման ձև է, որն ուղղված է նախականխելու օրենքի խախտումները[2]: Դատավարագետների մի մասի կարծիքով էլ՝ քննիչին վարույթից հեռացնելը քրեադատավարական պատասխանատվության (սանկցիա) ձև է[3]:

Մի կողմ թողնելով տեսական գրականության մեջ դատախազի նշված լիազորության իրավական բնույթի վերաբերյալ տեսական մոտեցումները՝ սույն հոդվածի շրջանակներում անհրաժեշտ է առավել մանրամասն քննարկման առարկա դարձնել օրենսդրական այն հիմքերը, որոնք հնարավորություն են տալիս հսկող դատախազին քննիչին հեռացնել քրեական դատավարությանը մասնակցելուց:

1.Քննիչին վարույթից հեռացնելու հիմքերը ըստ ՀՀ քրեական դատավարության գործող օրենսգրքի:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 2-րդ մասի 10-րդ կետի համաձայն՝ նախաքննության և հետաքննության նկատմամբ դատավարական ղեկավարում իրականացնելով՝ դատախազի բացառիկ լիազորությունն է հետաքննության մարմնի աշխատակցին, քննիչին հեռացնել տվյալ գործով քրեական դատավարությանը մասնակցելուց, եթե գործի քննության ընթացքում նրանք թույլ են տվել օրենքի խախտում:

Հիշատակված քրեադատավարական նորմի բովանդակությունից տեսանելի է, որ քննիչին վարույթից հեռացնելու քրեադատավարական հիմքը վերջինիս կողմից թույլ տրված օրենքի խախտումն է, ինչը նշանակում է, որ ցանկացած, այդ թվում նաև ձևական խախտումը կարող է քննիչին տվյալ գործով վարույթից հեռացնելու հիմք դառնալ:

Քրեադատավարական օրենքով դատախազին վերապահված նշված լիազո-

[1] Հարկ է նշել, որ գործող քրեադատավարական օրենսգրքում գործածվում է «քննիչին քրեական դատավարությանը մասնակցելուց հեռացնել», իսկ նոր օրենսգրքում՝ «քննիչին վարույթից հեռացնել» ձևակերպումները: Սույն հոդվածում նշված երկու ձևակերպումներն էլ կգործածվեն:

[2] Տե՛ս **Соловьев А.Б., Токарева М.Е., Халиулин А.Г.** Прокурорский надзор за исполнением законов при расследовании преступлений. М.: Юрлитинформ, 2000. С. 79.

[3] Տե՛ս **Гамбарян А.С.** Отстранение следователя от производства: отвественность или прокурорская «расправа»?// Расследование преступлений: проблемы и пути их решения. 4 (22), 2018. С. 82.

ության կիրառման պրակտիկայի ուսումնասիրությունը նույնպես վկայում է, որ օրենքի (ինչպես նյութական, այնպես էլ դատավարական) ցանկացած, այդ թվում՝ ոչ էական, կոպիտ խախտումը առանձին դեպքերում քննիչին քրեական դատավարությանը մասնակցելուց հեռացնելու հիմք կարող է դառնալ:

Օրենքի ցանկացած խախտման հիմքով դատախազների կողմից քննիչին վարույթից հեռացնելու պրակտիկան բացառելու նպատակով՝ ՀՀ դատախազության կոլեգիայի 2022 թվականի մարտի 11-ի նիստի արձանագրության 4-րդ կետի 3-րդ ենթակետով սահմանվել է, որ հետաքննության մարմնի աշխատակցին կամ քննիչին տվյալ գործով քրեական դատավարությանը մասնակցելուց հեռացնելու որոշումները պետք է կայացվեն բացառապես այն դեպքում, երբ վարույթի ընթացքում վերջիններիս դրսևորած վարքագիծը ողջամտորեն հիմք է տալիս կասկածի տակ դնելու իրականացվող նախաքննության օբյեկտիվությունը, անաչառությունը[1]:

Այս կապակցությամբ Ա.Վ. Սմիրնովը և Կ.Բ. Կալինովսկին գտնում են, որ քննիչին վարույթից հեռացվելու հիմք կարող է լինել ոչ թե ցանկացած, այլ օրենքի էական, կոպիտ խախտումները: Հեղինակները միաժամանակ նշում են, որ քննիչին վարույթից հեռացնելու հիմք կարող է լինել նաև նրա կողմից իր վարույթում քննվող գործով ցանկացած հանցագործություն կատարելու փաստը[2]:

Ա.Ղամբարյանի կարծիքով՝ քննիչին վարույթից հեռացնելու հիմք կարող է լինել օրենքի այն էական խախտումը, որը հանգեցրել է՝

1) անձի՝ Սահմանադրությամբ երաշխավորված իրավունքների և ազատությունների խախտման կամ,

2) ապացույցի կորստյան[3]:

Այսպիսով, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում հստակ ամրագրված չեն քննիչին վարույթից հեռացնելու քրեադատավարական հիմքերը: Օրենսդիրը սահմանափակվել է այն ընդհանրական ձևակերպմամբ, որ քննիչին տվյալ գործով վարույթից հեռացնելու հիմքը վերջինիս կողմից թույլ տրված օրենքի խախտումն է՝ չհստակեցնելով, թե օրենքի ինչպիսի խախտումը կարող է դատախազի կողմից նման որոշում կայացնելու հիմք դառնալ:

2. Քննիչին վարույթից հեռացնելու հիմքերը՝ ըստ ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի

ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետի համաձայն՝ հսկող դատախազը քրեական վարույթի ընթացքում օրենքի կոպիտ խախտում թույլ տալու դեպքում հետաքննության մարմնի պետին, հետաքննիչին կամ քննիչին հեռացնում է տվյալ վարույթին մասնակցելուց, սակայն չի կարող որոշում կայացնել նրա փոխարեն այլ անձ նշանակելու մասին:

Ի տարբերություն գործող քրեադատավարական օրենսգրքի՝ նոր օրենսգիրքը քննիչին վարույթից հեռացնելու հիմք է դիտում վերջինիս կողմից օրենքի կոպիտ խախտում թույլ տալը: Հատկանշական է, որ օրենսդիրը բացահայտել է նաև, թե ինչպիսի դրսևորում կարող է ունենալ օրենքի կոպիտ խախտումը: Այսպես, ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի 38-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Սույն հոդվածի 1-ին մասի 13-րդ կետի իմաստով՝ քրեական վարույթի ընթացքում թույլ տված օրենքի կոպիտ խախտումներն են՝

1) Սահմանադրությամբ ամրագրված՝ մարդու հիմնական իրավունքի կամ ազատության խախտումը.

2) նախաքննության բնականոն ընթացքը խաթարող խախտումը.

3) հսկող դատախազի հանձնարարությունները պարբերաբար չկատարելը»:

---

[1] Տե՛ս https://www.prosecutor.am/am/

[2] Տե՛ս **Смирнов А.В. Калиновский К.Б.** Уголовный процесс: Учебник для вузов-СПБ.: Питер, 2005, էջ 111:

[3] Տե՛ս **Гамбарян А.С.** նշված հոդվածը, էջ 91:

Կարծում ենք, որ քննիչին վարույթից հեռացնելու հիմք կարող է լինել նաև իր վարույթում քննվող քրեական գործով հանցագործություն կատարելու փաստը, ինչը ողջամտորեն կարող է կասկածի տակ դնել այդ գործով նրա կողմից օբյեկտիվ նախաքննություն կատարելու հնարավորությունը:

ա. **Սահմանադրությամբ ամրագրված՝ մարդու հիմնական իրավունքի կամ ազատության խախտումը՝ որպես վարույթից հեռացնելու հիմք:** Քրեական վարույթի ընթացքում օրենքի կոպիտ խախտման հանգեցնող, հետևաբար նաև քննիչին վարույթից հեռացնելու հիմք կարող է լինել վերջինիս կողմից Սահմանադրությամբ երաշխավորված անձի հիմնական իրավունքների և ազատությունների խախտումը: Ընդ որում, քրեական վարույթի ընթացքում թույլ տրվող նշված բնույթի խախտումները կարող են բազմազան լինել: Յուրաքանչյուր դեպքում նշված հիմքով քննիչին վարույթից հեռացնելու մասին որոշում կայացնելիս անհրաժեշտ է պարզել, թե Սահմանադրությամբ երաշխավորված՝ մարդու ո՞ր հիմնարար իրավունքն է խախտվել:

Հարկ է նշել նաև, որ այս բնույթի խախտումները ոչ միայն կարող են քննիչին տվյալ քրեական վարույթից հեռացնելու, այլև՝ առանձին քրեական վարույթ նախաձեռնելու հիմք դառնալ: Օրինակ՝ ինչպես գործող, այնպես էլ նոր քրեական օրենսգրքերը պատասխանատվություն են նախատեսում մարդու կամքին հակառակ կամ կամքն անտեսելով նրա բնակարան ապօրինի մուտք գործելու համար (147, 207 հոդվածներ): Բերված օրինակի դեպքում քննիչի կողմից թույլ տրված օրենքի կոպիտ խախտումը ոչ միայն պետք է հանգեցնի քրեադատավարական, այլև՝ քրեաիրավական ներգործության միջոցների կիրառման:

բ. Օրենքի կոպիտ խախտման հանգեցնող թվարկած հիմքերի շարքում առավելապես պարզաբանման կարիք ունեն **նախաքննության բնականոն ընթացքի խաթարմանը հանգեցնող խախտումները:** Օրենսդիրը, նախատեսելով նշված հիմքով քննիչին քրեական վարույթից հեռացնելու հնարավորություն, այդուհանդերձ չի բացահայտել, թե նախաքննության բնականոն ընթացքի խաթարմանը հանգեցնող խախտումները ինչպիսիք կարող են լինել:

Այս առումով որպես ուղենիշ կարող է լինել ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի՝ 2015թ. մարտի 27-ի արձանագրային որոշմամբ հաստատված ուղեցույցով նախատեսված այն խախտումները, որոնք «Քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի իմաստով ենթակա են գնահատման որպես քննիչի կողմից թույլ տրված օրենքի կոպիտ խախտումներ:

Հիշատակված ուղեցույցի 4-րդ կետի համաձայն՝ քննիչի կողմից իր դատավարական լիազորություններն իրականացնելիս «Քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի իմաստով օրենքի կոպիտ խախտումներն են՝ մինչդատական վարույթի արդյունավետությունը և բնականոն ընթացքը խաթարող հետևյալ խախտումները.

1) առանց իրավաչափ նպատակի տևական ժամկետով անգործություն դրսևորելը, այն է՝ անհրաժեշտ դատավարական գործողություններ չկատարելը՝ անկախ դրա հետևանքից,

2) *քննչական և այլ դատավարական գործողություն կատարելու անհրաժեշտությունը պայմանավորող փաստական հիմքերի ակնհայտ առկայության պայմաններում առանձին գործողություններ չկատարելը կամ ժամանակին չկատարելը, որը հանգեցրել կամ ողջամտորեն կարող էր հանգեցնել ապացույցների կորստի,*

3) *մինչև նախաքննությունն ավարտելը քրեական գործում առկա նյութերը օրենքով սահմանված դատավարական կարգի պահպանմամբ չհետազոտելը կամ փաստացի հետազոտման արդյունքները չարձանագրելը,*

4) *նախաքննությունն ավարտելու (մեղադրական եզրակացություն, բժշկական բնույթի միջոցների կիրառման համար քրեական գործը դատարան ուղարկելու մասին (մեղադրական ակտ) կամ քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշում)*

կամ քրեական հետապնդումը դադարեցնելու (չիրականացնելու) վերաբերյալ դատավարական փաստաթղթերի ձևին և բովանդակությանը ներկայացվող օրենքի պահանջների խախտումը, որը հանգեցրել կամ կարող էր հանգեցնել մարդու իրավունքների խախտման,

5) *ապացույցներ հավաքելիս՝ օրենքի այնպիսի խախտում կատարելը, որը հանգեցրել կամ ողջամտորեն կարող էր հանգեցնել ապացույցի անթույլատրելիության,*

7) *օրենքով նախատեսված դատավարական ժամկետները խախտելը*[1]:

Այսպիսով, նոր քրեական դատավարության օրենսգրքում հնարավորինս հստակեցվել են քննիչին վարույթից հեռացնելու քրեադատավարական հիմքերը, ինչն անկասկած կբացառի օրենքի ցանկացած, ոչ էական խախտման հիմքով քննիչին վարույթից հեռացնելու՝ չհիմնավորված որոշումներ կայացնելու հնարավոր դրսևորումները, որն էլ իր հերթին սահմանափակում է քննիչի դատավարական անկախությունը[2]:

գ. **Հսկող դատախազի հանձնարարությունները պարբերաբար չկատարելը՝ որպես վարույթից հեռացնելու հիմք:** ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հսկող դատախազն իրավասու է հանձնարարություն տալու՝

1) քննչական մարմնի ղեկավարին, քննիչին կամ հետաքննության մարմնի պետին՝ նրանց կատարած անօրինական գործողությունը դադարեցնելու կամ դրա հետևանքները չեզոքացնելու կապակցությամբ.

2) քննչական մարմնի ղեկավարին, քննիչին կամ հետաքննության մարմնի պետին՝ նրանց անօրինական որոշումը վերացնելու դեպքում դրա հետևանքները չեզոքացնելու կապակցությամբ.

3) քննիչին՝ քրեական հետապնդման հարուցման կամ դադարեցման հարցը լուծելու, հարկադրանքի միջոցներ կիրառելու, դատարանում հանրային մեղադրանքը պաշտպանելու կամ պետական շահերի պաշտպանության հայց հարուցելու համար նշանակություն ունեցող որոշակի հանգամանքներ պարզելու կապակցությամբ:

Հարկ է նշել, որ հոդվածում թվարկված հանգամանքների կապակցությամբ հսկող դատախազի կողմից քննիչին տրված օրինական հանձնարարությունները չկատարելը կարող է վերջինիս վարույթից հեռացնելու հիմք դառնալ, եթե այն պարբերաբար չի կատարվել: Կարծում ենք՝ հսկող դատախազի տված օրինական հանձնարարությունների չկատարման պարբերականության մասին կարող է վկայել դրանք մեկից ավելի անգամ առանց իրավաչափ հիմքի չկատարելը:

Անհրաժեշտ է նկատի ունենալ նաև, որ ինչպես գործող քրեական դատավարության օրենսգիրքը, այնպես էլ նոր օրենսգիրքը քննիչի անմիջական վերադաս քննչական բաժնի պետին քրեական վարույթից հեռացնելու դատավարական մեխանիզմներ չեն նախատեսում, եթե իհարկե վերջինս քրեական վարույթի ընթացքում հանդես չի գալիս որպես քննիչ:

3. Քրեական դատավարությանը մասնակցելուց հեռացված քննիչի՝ տվյալ գործով հետագա վարույթին մասնակցության հնարավորությունը:

Քննիչին քրեական վարույթից հեռացնելու տեսանկյունից պարզաբանման կարիք ունի նաև այն հարցը, թե արդյոք վերջինս իրավասու է որպես քննչական խմբի անդամ քննիչ նույն գործով մասնակցել հետագա վարույթին:

Գործնականում առանձին դեպքերում դատախազի կողմից քննիչին օրենքի խախտում թույլ տալու հիմքով տվյալ գործով քրեական դատավարությանը մասնակցելուց հեռացնելու մասին որոշում կայացնելուց հետո քննչական բաժնի պետի

[1] Տե՛ս https://www.investigative.am/news/view/qc-kargapahakan.html

[2] Տե՛ս **Дармаева В.Д.** Следователь в уголовном судопроизводстве – М.: 2007, С. 105:

կողմից որոշում է կայացվում տվյալ քրեական գործով նախաքննության կատարումը քննչական խմբին հանձնարարելու մասին և խմբի կազմում ընդգրկում է տվյալ գործով վարույթից հեռացված քննիչին: Օրինակ՝ ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչությունում քննված թիվ 55154819 քրեական գործով հսկող դատախազի կողմից 2019 թվականի հունիսի 21-ին որոշում է կայացվել օրենքի կոպիտ խախտում թույլ տալու հիմքով քննիչին քրեական դատավարությանը մասնակցելուց հեռացնելու մասին:

2019 թվականի հունիսի 25-ին քրեական գործը նույն քննչական մարմնի մեկ այլ քննիչի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Քննչական բաժնի պետի՝ 2019 թվականի հուլիսի 4-ի որոշմամբ նախաքննության կատարումը դրա մեծածավալ լինելու հիմքով հանձնարարվել է քննչական խմբին, որում, ի թիվս այլոց, ընդգրկվել է նաև հսկող դատախազի՝ 2019 թվականի հունիսի 21-ի որոշմամբ քրեական դատավարությանը մասնակցելուց հեռացված քննիչը:

Բերված օրինակը եզակի չէ. քննչական այլ ստորաբաժանումներում նույնպես արձանագրվել են նմանատիպ դեպքեր:

Կարծում ենք, որ նշված պրակտիկան իրավաչափ չէ, չի բխում քրեադատավարական օրենքից, քանի որ տվյալ գործով վարույթից հեռացված քննիչը որևէ այլ դատավարական կարգավիճակով, այդ թվում՝ որպես խմբի անդամ քննիչը չի կարող մասնակցել տվյալ գործով վարույթին: Այլ կերպ՝ քննիչին վարույթից հեռացնելը բացառում է նրան տվյալ գործով վարույթին մասնակցելու հնարավորությունը:

Հակառակ մոտեցման պարագայում քրեական գործով վարույթի ընթացքում հսկող դատախազին օրենքով վերապահված նշված լիազորության իրացումը կդառնա ձևական, և վերջինս կզրկվի մինչդատական վարույթի օրինականությունը ապահովելու՝ իր դատավարական պարտականությունը պատշաճ կատարելու հնարավորությունից:

Այսպիսով, քննիչին քրեական վարույթից հեռացնելու՝ գործող քրեադատավարական և նոր օրենսգրքերում ամրագրված նորմերի համեմատաիրավական վերլուծությունը վկայում է, որ նոր օրենսգրքում այդ հիմքերը առավել ամբողջական և որոշակի ամրագրում են ստացել, ինչն անկասկած կբացառի ցանկացած խախտման դեպքում հսկող դատախազի կողմից քննիչին քրեական վարույթից հեռացնելու որոշման կայացման հնարավորությունը, որպիսի գաղափարն էլ իր արտացոլումն է ստացել ՀՀ դատախազության կոլեգիայի 2022 թվականի մարտի 11-ի նիստի արձանագրության մեջ:

УГОЛОВНО-ПРОЦЕССУАЛЬНЫЕ РЕГУЛИРОВАНИЯ ПО ОТСТРАНЕНИЮ СЛЕДОВАТЕЛЯ ОТ ПРОИЗВОДСТВА СОГЛАСНО ПОЛОЖЕНИЯМ ДЕЙСТВУЮЩИХ И НОВЫХ УГОЛОВНО-ПРОЦЕССУАЛЬНЫХ КОДЕКСОВ РА

Арсен Мартиросян
Начальник управления по надзору за законностью досудебного производства в антикоррупционном комитете ра генеральной прокуратуры РА, кандидат юридических наук, доцент

В статье рассматриваются законодательные нормы, позволяющие надзирающему прокурору отстранять следователя от участия в уголовном производстве по данному делу.

В рамках статьи проанализированы основания отстранения следователя от производства, зафиксированные как в действующем, так и в новом УПК. Автор считает приемлемым подход о том, что любое нарушение закона не может быть основанием для отстранения следователя от производства: подобный подход в сущности и закреплен в новом Уголовно-процессуальном кодексе РА.

В рамках проведенного изучения также были выявлены закрепленные в новом Уголовно-процессуальном кодексе РА основания по отстранению следователя от производства, приводившие к грубому нарушению закона.

В результате проведенного анализа автор пришел к выводу, что в новом Уголовно-процессуальном кодексе более определенно закреплены основания по отстранению следователя от производства, что, несомненно, исключит возможность применения такого прокурорского акта в случае какого-либо нарушения.

CRIMINAL PROCEDURE REGULATIONS ON DISMISSAL OF THE INVESTIGATOR FROM PROCEEDINGS ACCORDING TO THE REGULATIONS OF THE CURRENT AND NEW CRIMINAL PROCEDURE CODES OF THE RA

Arsen Martirosyan
Head of the Department of Supervision over Legality of Pre-Trial Proceedings in the RA Anti-Corruption Committee of the RA Prosecutor General's Office, Candidate of Legal Sciences, Associate Professor

The article discusses those legislative norms that allow the supervising prosecutor to dismiss the investigator from participating in criminal proceedings of the case.

Within the framework of the study were analyzed the grounds for the dismissal of the investigator from proceedings, fixed both in the current and in the new Criminal Procedure Code. The author considers acceptable the approach that any violation of the law cannot be the basis for dismissal of the investigator from the proceedings, such an approach is fixed in the new Criminal Procedure Code of the Republic of Armenia.

Within the framework of the study were also identified the grounds fixed in the new Criminal Procedure Code of the Republic of Armenia for the dismissal of the investigator from proceedings, leading to a gross violation of the law.

As a result of the carried out study, the author came to the conclusion that the new Code of Criminal Procedure more specifically sets out the grounds for the dismissal of the investigator from proceedings, which will undoubtedly exclude the possibility of applying such a prosecutorial act in case of any violation.

Բանալի բառեր – *քննիչ, քրեական վարույթ, քրեական դատավարություն, վարույթից հեռացնել, օրենքի կոպիտ խախտում, մինչդատական վարույթի բնականոն ընթացքի խաթարում*
Ключевые слова: *следователь, уголовное производство, уголовное судопроизводство, отстранение от производства, грубое нарушение закона, нарушение нормального хода досудебного производства*
Keywords: *investigator, criminal proceedings, criminal procedure, dismissal from proceedings, gross violation of the law, violation of the normal course of pre-trial proceedings*